2

Պայթյուն Չինաստանի ստորգետնյա անցումում

4

Սահնակ-պատգարակ՝ «Փյունիկ» միության կողմից


5

Շնչող պատուհաններ


7

Ծերացումը հետաձգվում է

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
ISSN 1829-149X

ով իրազեկված է, նա պաշտպանված է

արտակարգ թերթ

N 7 (471) 8.3.2013 -14.3.2013 www.emergency.am

Մեզ հավատում են ու վստահում

Մարտի 5-ին ՀՀ ԱԻ նախարարության նիստերի դահլիճում տեղի ունեցավ կոլեգիայի ընդլայնված նիստ, որի ընթացքում ամփոփվեցին ԱԻ նախարարության 2012 թ. գործունեության արդյունքները: Ներկա էին ՀՀ ԱԻ նախարարության բոլոր ստորաբաժանումների ղեկավարներն ու ՀՀ ԱԱԽ քարտուղար Ա. Բաղդասարյանը:

Հայաստանի Հանրապետության օրհներգը հնչեցնելուց եւ ԱԻՆ դրոշը հանդիսավոր կերպով դահլիճ բերելուց հետո՝ հիմնական զեկույցի համար խոսքը տրվեց ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրեն, գեներալ-մայոր Ս. Ազարյանին: Իր ելույթում նա, մասնավորապես, ասաց.

- Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻ նախարարության կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումների, նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ների գործունեությունն ուղղված է եղել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը եւ քաղպաշտպանության համակարգի կատարելագործմանը: Գործունեության հիմնական ուղղություններն են եղել ՀՀ ԱԻՆ համակարգում բարեփոխումների իրականացումը, «911» ծառայության զարգացումը եւ ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծումը, սեյսմիկ ռիսկի նվազեցումն ու վտանգի գնահատումը, դիսպանչերի արդիականացումը, մթնոլորտային երեւույթների վրա արդյունավետ եւ ակտիվ ներգործությունը, տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման լծակների արդյունավետ օգտագործումը, հրդեհային անվտանգության ապահովման արդյունավետության բարձրացումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության եւ քաղպաշտպանության հիմնահարցերով ղեկավար մարմինների եւ բնակչության ուսուցումը, սակրավորների, օդադեսանտային, կինոլոգիական կազմավորումների զարգացումն ու համապատասխան գույքով ապահովումը, ինչպես նաեւ կամավորական փրկարարական շարժման հիմնումը եւ հետագա զարգացման ապահովումը: Անցյալ տարի «911» ծառայությունում գրանցվել է 1.305 000 զանգ, որից 10598-ը՝ արտակարգ դեպքերի վերաբերյալ (2011 թ.՝ 11087): Պատահարների հետեւանքով զոհվել է 554 (2011 թ.՝ 522), վիրավորվել՝ 7929 մարդ (2011 թ.՝ 7451):

ՓԾ տնօրենի զեկույցից հետո ՀՀ ԱԱԽ քարտուղար Ա. Բաղդասարյանը նրան հարցեր ուղղեց մարդասիրական կենտրոնների եւ մարզային ՃԿԿ-ների ստեղծման վերաբերյալ, որոնց ի պատասխան Ս. Ազարյանն ասաց.

- Մարդասիրական կենտրոնների ստեղծման վերաբերյալ Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ կա միջգերատեսչական համաձայնագիր, ըստ որի՝ նախատեսվում է կառուցել մարդասիրական 2 կենտրոն: ԱԻ նախարարի հրամանով՝ ՀՀ բոլոր մարզերում կստեղծվեն ճգնաժամային կառավարման կենտրոններ, որոնցից չորսի ստեղծումը 2013 թ. նախարարության գերակա խնդիրներից է համարվում: Նշված չորս կենտրոնները կստեղծվեն Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում:

Իր ելույթում ԱԻ նախարար Ա. Երիցյանը նշեց, որ 2012 թ. նախարարության առջեւ դրված հիմնական խնդիրները կատարվել են, սակայն անելիքներ դեռ կան: Կարեւոր է ձեւավորել միջազգային սեյսմիկ կենտրոն, 2013-2014 թթ. պետք է ձեռնամուխ լինել ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան թիմեր պատրաստելուն, ինչպես նաեւ առավել սերտացնել աշխատանքներն Արցախի փրկարար ծառայության հետ:

Նիստի ընթացքում ելույթ ունեցավ նաեւ ԱԱԽ քարտուղար Ա. Բաղդասարյանը.

- ԱԻ նախարարության ձեռքբերումներն ակնհայտ են, սակայն կան մի շարք գերակա խնդիրներ: Շատ կարեւոր է միջազգային համագործակցությունը, որի շրջանակներում կստեղծվեն հայ-ռուսական մարդասիրական կենտրոններ: Առաջիկայում ԱԻՆ տրամադրության տակ կանցնի նաեւ Ստեփանավանի օդանավակայանը՝ նախարարության վարչական կարողությունները հզորացնելու նպատակով: Նախատեսվում է մոտ ապագայում Գյումրիում հիմնել ուղղաթիռների վերանորոգման հայ-ռուսական ձեռնարկություն, որը կունենա տարածաշրջանային նշանակություն: Կարեւոր խնդիրներից է «911» ծառայության հզորացումն ու մարզային ՃԿԿ-ների ստեղծումը: Աշխատանքները շատ են քաղպաշտպանության եւ սեյսմիկ անվտանգության ոլորտներում, սակայն ԱԻՆ-ը տարեցտարի հզորանում է:

2012 թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին զեկույցներով հանդես եկան ՀՀ ԱԻՆ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները՝ ներկայացնելով իրենց ոլորտներում իրականացված աշխատանքներն ու այս տարվա առաջնայնությունները:

Նիստի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ ԱԻ նախարար Ա. Երիցյանը.

- Մենք տեսնում ենք, որ վերջին 1-2 տարվա ընթացքում ԱԻ նախարարության վարկանիշը զգալիորեն բարձրացել է: Մեր համաքաղաքացիները մեզ հավատում են ու վստահում՝ օգնության խնդրանքով դիմելով ամենատարբեր դեպքերում: Դրան մենք հասել ենք մեր միասնական ջանքերի շնորհիվ եւ այդ պատճառով մենք միշտ ավելի շատ աշխատենք ու քայլենք առաջ: Մենք իրավունք չունենք հուսախաբ անել նրանց, ովքեր հավատում են մեզ եւ օգնություն ակնկալում մեզնից: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ եւս մեկ անգամ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր փրկարարներին: Այն տղաներին, որոնք անտեսելով բոլոր վտանգներն ու դժվարությունները՝ անմնացորդ նվիրումով կատարում են իրենց ծառայողական պարտքն ու օգնության հասնում բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Հայաստանը՝ լավագույնների շարքում

Մարտի 4-ին ՀՀ ԱԻ նախարարությունում տեղի ունեցավ հերթական ամենշաբաթյա խորհրդակցությունը, որը վարում էր նախարար Արմեն Երիցյանը:

ՓԾ տնօրեն, գեներալ-մայոր Ս. Ազարյանը զեկուցեց շաբաթվա ընթացքում տեղի ունեցած դեպք-պատահարների և արձագանքման միջոցառումների մասին: Նա նաև նշեց, որ մշակվել է սողանքների, աղետների կառավարման հայեցակարգ և գարնանային հնարավոր հեղեղումներին նախապատրաստվելու առաջարկ:

Անցած շաբաթ հանրապետության տարածքում անցկացվել է Քաղպաշտպանության համաշխարհային օրվան նվիրված 338 միջոցառում, որոնք ստացել են դրական արձագանք և արժանացել բազում շնորհակալական խոսքերի:

Ս. Ազարյանը զեկուցեց նաև Հայաստանում հայ-ռուսական համատեղ տարածաշրջանային մարդասիրական օգնության կենտրոնի հիմնման վերաբերյալ ռուս գործընկերների հետ տեղի ունեցած հանդիպման արդյունքների մասին: Արդեն իսկ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ կենտրոնի ձևաչափի, տեղակայման վայրի, կառուցվածքի, հայեցակարգի, ֆինանսական և այլ հարցերի շուրջ: Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ աշխատանքներ են տարվում ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան թիմեր պատրաստելու ուղղությամբ: Շվեյցարացի գործընկերների օժանդակությամբ անցած շաբաթ Կապանում և Գյումրիում կազմակերպվել են հրահանգիչների վերապատրաստման դասընթացներ:

Նախարարի խորհրդական Ա. Հակոբյանը զեկուցեց, որ արդեն գործող ԱԻՆ մշակույթի կենտրոնն ընդունելություն է հայտարարել և մոտ ապագայում տեղի կունենա կենտրոնի պաշտոնական բացումը:

Խորհրդակցության ընթացքում ԱԻ նախարարին զեկուցեցին, որ շուտով կգործարկվի ԱԻՆ համաբուժարանի կլինիկական լաբորատորիան:

ՓԾ տնօրենի տեղակալ Ն. Գրիգորյանը զեկուցեց փետրվարի 25-ից մարտի 1-ը Ստամբուլում կայացած «ԱՌՆ կրթության ներդրումը դպրոցներում» թեմայով գիտաժողովին մասնակցության մասին: Մասնակից երկրների շարքում հայկական պատվիրակության ելույթը համարվել է լավագույնը: Աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ ներկայացված մանկական տեսահոլովակներն արժանացել են բարձր գնահատականի և առանձնացվել ժնևում կայանալիք ԱՌՆ Գլոբալ պլատֆորմի հանդիպմանը ցուցադրելու համար:

Տոնական համերգ ԱԻ նախարարությունում

ԱԻ նախարար Ա. Երիցյանի տոնական ուղերձը

Սիրելի կանայք եւ աղջիկներ,

Բնական ու տեխնածին աղետների այս երկրում, որտեղ ամեն անկյունում մի վտանգ է թաքնված, չկա ավելի հզոր ու աջակից ուժ, քան հայ կինը, մայրը, քույրը:

Արտակարգ իրավիճակների կառավարման բնագավառում ձեր դերն ու կատարած աշխատանքն անգնահատելի են ու չափազանց անհրաժեշտ: Նախարարության առաջընթացն ու կայացումը նաեւ ձեր շնորհիվ են եղել:

Շնորհավորելով այս գեղեցիկ գարնանային տոնի կապակցությամբ՝ մաղթում եմ, որ ձեզ համար տոն լինեն տարվա բոլոր օրերը, որպեսզի միշտ լինեք առողջ, երջանիկ, անհոգ ու անվտանգ՝ շրջապատված սիրելիներով ու հարազատներով:

Հարգանքով՝
Արմեն Երիցյան

Կանանց տոնի նախօրյակին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում տոնական տրամադրություն էր, ջերմ եւ ուրախ մթնոլորտ: Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ նախարարությունում կազմակերպվել էր տոնական համերգ՝ հյուրասիրությամբ ու նվերներով:

ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանը, շնորհավորելով կանանց եւ աղջիկներին Մարտի 8-ի առթիվ, մաղթեց անսահման երջանկություն եւ ամենայն բարիք:

Մի քանի ժամ տեւած համերգի ընթացքում ուրախ երգերով, պարերով ու տարբեր երաժշտական կատարումներով ԱԻ նախարարության համակարգի աշխատակցուհիներին ողջունեցին հանրահայտ ու սիրված երգիչ-երգչուհիներ եւ երաժիշտներ՝ Վարդան Բաղալյան, Աննա Խաչատրյան, Ռուզան Ավետիքյան, Միեր, Գեւորգ Պողոսյան, Վարազդատ Խեչումյան, Քնարիկ Զաքարյան, Նարինե Մկրտումյան, «Միլեն» շոու-բալետ...

Միջազգային լուրեր

Պայթյուն Չինաստանի ստորգետնյա անցումում. 20 վիրավոր

Պայթյունը տեղի է ունեցել երկուշաբթի օրը, Չինաստանի հյուսիս-արեւելյան հատվածում գտնվող Շենյան քաղաքի ստորգետնյա անցումում՝ շինարարական աշխատանքների ժամանակ: Պատահարի հետեւանքով տուժել է 20 մարդ:

Միջադեպը տեղի է ունեցել հսկայական առեւտրի կենտրոն «Սինշիցզե»-ի մոտ կառուցվող ստորգետնյա գնումների փողոցի հատվածում: Ըստ նախնական տվյալների՝ պայթյունի պատճառ է հանդիսացել գազի արտահոսքը: Պատահարի ժամանակ գետնացումում աշխատանքներ են իրականացնելիս եղել ավելի քան 40 աշխատող, որոնցից 20-ը ստացել են տարբեր վնասվածքներ:

Ըստ տեղական լրատվամիջոցների՝ պայթյունը զգացվել է մեկ կիլոմետր շառավղով:

Կոնգոյում ինքնաթիռ է ընկել

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության արեւելյան հատվածում գտնվող տեղական ընտրական հանձնաժողովի ու գաղթականների տեղական կառավարման շենքերին հարակից բնակելի թաղամասի վրա ընկել է «Fokker 50» ինքնաթիռը, որը պատկանում է տեղական CAA ավիաընկերությանը:

Ավիավթարը տեղի է ունեցել Գոմա քաղաքում, որը Հյուսիսային Կիվու գավառի վարչական կենտրոնն է:

Պատահարի հետեւանքով բնակիչներից ոչ ոք չի տուժել, սակայն զոհվել է ինքնաթիռի ամբողջ անձնակազմը եւ ուղեւորները՝ 30 հոգի:

Ավիավթարի պատճառների մասին առայժմ ոչինչ հայտնի չէ:

Բոլոր տեղական ավիաուղիները ներկա պահին Եվրոպական միության կողմից ընդգրկված են սեւ ցուցակում, եւ նրանց արգելված է չվերթներ կատարել դեպի Եվրոպա:

Մորեխները գրոհում են Իսրայելի հարավային հատվածը

Մորեխների մի քանի պարս, որոնք ծածկել էին հարեւան Եգիպտոսի դաշտերը, երեքշաբթի եւ չորեքշաբթի օրերին վայրէջք են կատարել Նեգեւում:

Հսկայական մորեխները, որոնք ունակ են մի քանի ժամում ոչնչացնել հացահատիկային մշակաբույսերի հեկտարներ, նկատվել են Իսրայելի հարավում, ինչն անհանգստացրել է գյուղացիներին:

Իսրայելի գյուղատնտեսության նախարարությունը ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ եւ ստեղծել է թեժ գիծ, որին կարող են ահազանգել գյուղացիները: Հասարակությանը կոչ են անում չվախենալ այն հատուկենտ հսկայական մորեխներից, որոնք կնկատվեն քաղաքներում:

Տուվայում ձնահյուսի տակ է մնացել 7 դեռահաս

Մարտի 3-ին, Տուվայի Հանրապետությունում՝ Մոնգունում գտնվող Աք-Բաշտիկ լեռան վրա տեղի է ունեցել ձնահոսք, որի տակ է մնացել յոթ հոգուց կազմված դեռահասների խումբ: Նրանցից մեկին հաջողվել է դուրս գալ եւ հայտնել պատահածի մասին:

Չյան տակ են մնացել 11-րդ դասարանի 3 աշակերտ, 9-րդ եւ 7-րդ դասարանների մեկական աշակերտ եւ 18 տարեկան պատանի: Բոլոր երիտասարդները մարզիկներ են:

Մահացած հինգ երիտասարդների դիերը փրկարարները գտել են, իսկ վեցերորդի որոնողական աշխատանքները դեռ շարունակվում են:

Տիեզերքում հայտնաբերվել է կոսմոլոգիական սկզբունքը հերքող ամենամեծ կազմությունը

Կենտրոնական Լանկշայրի համալսարանի բրիտանացի աստղագետները հայտնաբերել են Տիեզերքի ամենամեծ «կառույցը»: Գալակտիկաների ակտիվ միջուկների՝ քվազարների խումբը տարածվում է 4 մլրդ լուսատարի տարածության մեջ: Գիտնականների հետազոտության արդյունքները հրապարակվել են Monthly Notices of the Royal Astronomical Society ամսագրում:



Քվազարներն իրենցից ներկայացնում են հին գալակտիկաներ, որոնք, վարկածներից մեկի համաձայն, գտնվում են իրենց զարգացման սկզբնափուլում եւ որոշակի շրջանում բացառիկ բարձր պայծառություն են ունենում:

Աստղաֆիզիկոսները կարծում են, որ նման ինտենսիվ լուսարձակման տեւողությունը 10-100 միլիոն տարի է կազմում, եւ հնարավոր է՝ դա պայմանավորված է գալակտիկաների կենտրոնում գերբարձր զանգվածով սեւ խոռոչի առկայությամբ, որն այդ փուլում առավել ակտիվորեն է կլանում նյութը:

Սկսած 1982 թ. հայտնի էր, որ քվազարները մեծ խմբեր կազմելու հակում ունեն, սակայն խումբը, որը բացահայտվել է Ռոջեր Կլաուզի եւ իր գործընկերների կողմից, այնքան մեծ է, որ կասկածի տակ է դնում հիմնական կոսմոլոգիական սկզբունքը:

Խոսքը վերաբերում է ժամանակակից կոսմոլոգիայի հիմնական դրույթին, որը հիմնված է Ալբերտ Էնշտեյնի աշխատության վրա, ըստ որի՝ Տիեզերքը մեծ մասշտաբով դիտարկելիս միանման տեսք ունի, անկախ նրանից, թե որտեղ է գտնվում դիտողը:

Սովորաբար գալակտիկաների խմբերը տրամագծում մինչեւ տասը միլիոն լուսատարի ունեն:

Քվազարների խմբերի նախորդ հետազոտությունները ցույց են տվել, որ դրանց չափերը կարող են հասնել 650 մլն լուսատարու: Կոսմոլոգիական սկզբունքի վրա հիմնված հաշվարկները ցույց էին տալիս, որ տեսականորեն ավելի քան 1,2 միլիարդ լուսատարի չափերով կառուցվածքներ չեն կարող գոյություն ունենալ: Սակայն բրիտանացի գիտնականների նոր աշխատանքը ցույց է տալիս, որ դա այդպես չէ:

Երկարավուն ձեւի շնորհիվ խմբի առավելագույն երկարությունը կարող է 4 մլրդ լուսատարու հասնել:

«Դեռեւս բարդ է հասկանալ այդ խմբի իրական չափերը, սակայն մենք կարող ենք միանգամայն որոշակիորեն հայտարարել, որ դեռեւս ոչ ոք Տիեզերքում նման չափերի բան չի տեսել: Դա չափազանց հուզիչ է, քանի որ հերքում է մեր պատկերացումները Տիեզերքի վերաբերյալ, որն այժմ այդքան միատարր չի թվում, որքան մենք նախկինում պատկերացնում էինք», - ասում է Կլաուզը համալսարանի մամուլի հաղորդագրության մեջ:

Ստեղծագործում են ԱԻՆ աշխատակիցները

Մարտի 8

Գարնան առաջին արեւը վկա,
Մայրերի համար գեղեցիկ տոն կա՝
8-ը մարտի համայն մարդկության,
Տոնն է մայրերի ու գեղեցկության…

Ի սրտե, մայրե՛ր, ձեր օրը բարի,
Միշտ կողքին լինեք ձեր բալիկների…
Իսկ եթե հանկարծ արեւը մարի,
Մոր ջերմությունը երկիր կպահի…

Անուշ մայրիկ

Մայր, դու իմ սեր՝ հոգուս ընկեր,
Քաղցր երազ ինձ կանչող,
Ճրագ կյանքի, հույս իմ բախտի,
Սեր ու հավատ ղողանջող…

Դու ես սերմել տաղն իմ հոգու,
Քո քաղցրանուշ երգերից,
Դու ես կնքել խաչն իմ սրտի,
Երբ սնվեցի քո կրծքից…

Անուշ մայրիկ, անգին մայրիկ,
Ջերմ ես անգամ արեւից…
Դու ես վառել մոմն իմ կյանքի,
Ինձ ավետած օրվանից…

Աշխարհումս ինչքա՞ն մայր կա՝
Թող նորերն էլ մայրանան,
Մայրիկ, քեզ պես անուշ արեւ
Թող բոլորն էլ ունենան…

Միշա Անտոնյան
ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի առաջատար մասնագետ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործող նորաբաց մշակույթի տունը հայտարարում է ընդունելություն հետեւյալ խմբակներում

- ժողովրդական պարեր (հայկական եւ այլ ազգերի)
- ժամանակակից պարեր
- լատինամերիկյան պարեր
- բրեյք-դանս
- հիփ-հոփ
- վոկալ
- դաշնամուր
- նկարչություն եւ բաթիք (նկարչություն գործվածքի վրա)
- դեկորատիվ կիրառական արվեստ, ապակու եւ կերամիկայի նախշանկար
- օտար լեզուներ (խոսակցական անգլերեն եւ ռուսերեն)
- թատերական:

Վեց տարեկանից բարձր երեխաները բոլոր անհրաժեշտ պայմանները կունենան իրենց արդյունավետ ժամանցը մշակույթի կենտրոնում անցկացնելու համար:

Մշակույթի տան բոլոր սաների համար ուսումնառության առաջին ամիսն անվճար կլինի, իսկ ՀՀ ԱԻ նախարարության աշխատակիցների երեխաների համար կգործեն զեղչեր:

Ցանկացողները, մինչեւ **ս/թ ապրիլի 1-ը**, կարող են դիմել հետեւյալ հասցեով՝ **ք. Երեւան, Գլինկայի 13** (Վ. Տերյանի անվան թիվ 60 դպրոցի հարեւանությամբ):

Մանրամասների համար զանգահարել՝ **57-33-22 (երկուշաբթի-ուրբաթ, ժամը՝ 11.00-17.00)**:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. փետրվարի 28-ից մինչեւ մարտի 6-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալանոց թույլ ցնցում է գրանցել: Այն տեղի է ունեցել մարտի 4-ին Չարենցավան քաղաքից 10 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 27 երկրաշարժ: Դրանցից 8-ը՝ (3-ից մինչեւ 4 բալ ուժգնությամբ) Թուրքիայի Վանի, իսկ 14-ը՝ (3-ից մինչեւ 6 բալ ուժգնությամբ) Իրանի Ահարի երկրաշարժերի հետցնցումներն են: Ահարի երկրաշարժի 2 հետցնցում՝ 5-6 բալ ուժգնությամբ, մինչեւ 3 բալ ուժգնությամբ զգացվել է նաեւ Հանրապետության Սյունիքի մարզում, մասնավորապես Կապան, Քաջարան եւ Մեղրի քաղաքներում:

3 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են տեղի ունեցել մարտի 1-ին՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտ քաղաքից 12 կմ հարավ-արեւմուտք, մարտի 2-ին՝ Իրանի Խոյ քաղաքից 40 կմ հյուսիս-արեւմուտք եւ մարտի 4-ին՝ Իրան-Ադրբեջան (Նախիջեւան) սահմանային գոտում՝ Ջուլֆա քաղաքից 35 կմ հյուսիս-արեւմուտք: Մարտի 2-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Սալմաս քաղաքից 34 կմ հարավ-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունն էր 4 բալ: Մարտի 6-ին 4-5 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել Ադրբեջանի տարածքում, որի էպիկենտրոնը գտնվում էր Եվլախ քաղաքից 21 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է 4 երկրաշարժ, բոլորն էլ խաղաղօվկիանոսյան օղակաձեւ գոտում (հրե օղակ): Փետրվարի 28-ին Վանուատու կղզիների ափերի մոտ տեղի է ունեցել 6.1 մագնիտուդով երկրաշարժ: Նույն օրը ռուսական Կամչատկայի երկրամասի արեւելյան ափերի մոտ (Կուրիլյան կղզիներ) գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժը 6.9 մագնիտուդ էր: Մարտի 1-ին նույն էպիկենտրոնային գոտում գրանցվել է 6.5 մագնիտուդով 2 սեյսմիկ իրադարձություն: Ստորգետնյա ցնցումներից Սեւերո-Կուրիլսկում ընդհատվել է էլեկտրամատակարարումը, երկրամասի մի շարք քաղաքներում խուճապ է առաջացել, տուժածներ կամ ավերվածություններ չկան:

Մարտի 3-ին Չինաստանի Յունան նահանգի հարավ-արեւմտյան հատվածում տեղի է ունեցել 5.2 մագնիտուդով երկրաշարժ: Սեյսմիկ իրադարձության հետեւանքով կա 30 վիրավոր, որից 3-ը գտնվում են ծանր վիճակում, տուժել են տասնյակ հազարավոր բնակիչներ, քանդվել են բազմաթիվ շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, շարքից դուրս են եկել էլեկտրա- եւ ջրամատակարարման համակարգերը: Տուժած գոտուց կատարվել է բնակչության տարհանում:

«ՍՊԾ» գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում՝

Մարտի 8-ին,10-12-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 9-ին արեւմտյան շրջաններում հնարավոր է թույլ ձյուն: Քամին՝ արեւմտյան 2-7մ/վրկ, լեռնային շրջաններում եւ լեռնանցքներում կդիտվի բուք, ճանապարհներին՝ մերկասառույց: Օդի ջերմաստիճանը մարտի 8-ի գերեկը, 9-12-ին մարտի 7-ի հետ համեմատ աստիճանաբար կբարձրանա 12-14 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը մարտի 8-ին գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -19...-24, Տավուշում՝ -6...-11, Լոռիում՝ -10...-15, Արագածոտնի նախալեռներում՝ -5...-8, Արարատյան դաշտում՝ -4...-7, Սյունիքի հովիտներում՝ -1...-5, Սյունիքի նախալեռներում՝ -10...-15, Արցախում՝ -3…-6 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը մարտի 8-ին ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ -2...-5, Տավուշում՝ +5...+10, Լոռիում՝ 0...+5, Արագածոտնի նախալեռներում՝ +4..+7, Արարատյան դաշտում՝ +5...+9, Սյունիքի հովիտներում՝ +3…+8, Սյունիքի նախալեռներում՝ 0…+5, Արցախում՝ +2…+7 աստիճանի սահմաններում:

Երեւանում՝

Մարտի 8-ին, 10-12-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: 9-ին սպասվում է ամպամածության ավելացում, տեղումների հավանականությունը փոքր է:

Օդի ջերմաստիճանը մարտի 8-ին գիշերն սպասվում է՝ -5...-7, ցերեկը՝ +6...+8 աստիճան տաքություն:

Սահնակ-պատգարակ՝ «Փյունիկ» միության կողմից

Մարտի 5-ին «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանն է նվիրաբերել հատուկ սահնակ-պատգարակ: Այն փրկարարներին հնարավորություն կտա արտակարգ դեպքերի ժամանակ դժվարանցանելի ճանապարհով տեղափոխել տուժածներին կամ ձնաբքի գերության մեջ հայտնված մարդկանց:

Սահնակ-պատգարակը ՀՀ ԱԻ նախարարությանը հանձնեց «Հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության նախագահ Հակոբ Աբրահամյանը՝ նախարար Ա. Երիցյանին եւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Բաղդասարյանին ներկայացնելով պատգարակի օգտագործման եղանակը:

ԱԻ նախարար Արմեն Երիցյանը շնորհակալություն հայտնեց նվիրատվության համար՝ նշելով, որ նման պատգարակի կարիք իրոք զգացվում էր:

Դա է վկայում նաեւ մարտի 4-ին Արագածոտնի մարզի Նիգավան գյուղի մոտ տեղի ունեցած միջադեպը, երբ Ապարանի բժշկական կենտրոն մեկնող ավտոմեքենան ձնաբքի պատճառով արգելափակվել էր եւ անհրաժեշտ էր եղել դիմել փրկարարների օգնությանը:

Դեպքի վայր էին մեկնել Ապարանի հրշեջ-փրկարարները՝ «Ուրալ» ամենագնաց ավտոմեքենայով, սակայն Նիգավան գյուղի սկզբնամասում ավտոմեքենան կանգ էր առել: Հրշեջ-փրկարարները ճանապարհը շարունակել էին ոտքով ու 1995 թ. ծնված Ռազմիկ եւ Պետրոս Մարտիրոսյաններին պատգարակով հասցրել «Ուրալ» ավտոմեքենային:

Հաշմանդամները համալրում են ԱԻՆ աշխատակիցների շարքերը

Մարտի 6-ին ՀՀ ԱԻ նախարարությունում տեղի ունեցավ աշխատանքի ընդունվելու նպատակով դիմած հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացվող չափանիշները գնահատող հանձնաժողովի 4-րդ նիստը:

ԱԻ նախարար Արմեն Երիցյանի հանձնարարությամբ ԱՌՆԱՊ հիմնադրամում ստեղծված «Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի» թեմատիկ խմբում ընդգրկված են ՀՀ արտակարգ իրավիճակների, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների, ԱՌՆԱՊ հիմնադրամի, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության եւ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:Հանձնաժողովում ընդգրկված են ԱԻ նախարարության եւ հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանձնաժողովը հարցազրույցի էր հրավիրել աշխատանքի համար դիմած սայլակավոր 4 քաղաքացու, որոնք բոլորն էլ հարցազրույցի արդյունքում անցան հաջորդ փուլ:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաեւ հաշմանդամներին ԱԻՆ տարբեր ստորաբաժանումներում աշխատանքի տեղավորելու հարցը եւ հավանական հաստիքների համապատասխանությունը հաշմանդամություն ունեցող տվյալ անձանց հնարավորություններին:

ՀՀ Նախագահի հանձնարարականի համաձայն՝ ԱԻ նախարարությունում ստեղծվել է 30 հաշմանդամի աշխատատեղ, եւ արդեն 11 հաշմանդամ ներկայումս փորձաշրջան է անցնում ԱԻՆ համակարգում:

Առայժմ ԱԻ նախարարությունում աշխատանքի ընդունվելու համար առաջնայնություն է տրվում ֆիզիկական սահմանափակ հնարավորություններով անձանց ամենախոցելի խավի ներկայացուցիչներին՝ սայլակավոր հաշմանդամներին:

Հիմնվել է Հայաստանի պատանի փրկարարների ասոցիացիա

Առաջին մանկապատանեկան հրշեջ-փրկարարական մրցաշարը Հայաստանում

ՀՀ ԱԻ նախարարության աջակցությամբ մարտի 4-ին Երեւանի Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոցում Հայաստանում 1-ին անգամ անցկացվեց պատանի հրշեջ-փրկարարների մրցաշար: Հիմնական նպատակն էր հիմք դնել մանկապատանեկան հրշեջ-փրկարարական շարժման համար եւ ստեղծել պատանի փրկարարների ասոցիացիա:

Ծրագրում ներառված էին փրկարարական եւ առաջին բուժօգնության հմտությունների ու կարողությունների, ինչպես նաեւ ընդհանուր գիտելիքների ցուցադրում: Մրցաշարին մասնակցում էր դպրոցի 9-11-րդ դասարանների 3 հավաքական թիմ, որոնցից յուրաքանչյուրն ունի ղեկավար եւ 7 մասնակից: Մրցաշարի մրցավարական կազմի մեջ ընդգրկված էին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության աշխատակիցներ:

Մրցաշարում ընդգրկված էին հետեւյալ ձեւերը՝

1.Մարաթոն (յուրաքանչյուր թիմից 4 մասնակից), որը բաղկացած է հետեւյալ փուլերից՝ փրկարարական հանգույցների կապում կառուցատարրերից, արգելքների հաղթահարում եւ այլն:

2.Տուժածին առաջին բուժօգնության ցուցաբերում (տուժածի վիճակի գնահատում, կողքի ապահովման դիրքի բերում, կոտրվածքների դեպքում բեկակալների տեղադրում եւ արյունահոսության դադարեցում):

3.Պատի կայծակնաթերթի հրապարակում եւ գեղարվեստական հմտություններ:

Վերջնական արդյունքներով 3-րդ մրցանակային տեղը գրավեց 9-րդ դասարանցիների հավաքական «ՍՕՍ» թիմը, 2-րդ տեղում էր 10-րդ դասարանցիների «ՀՀ թիվ 1 ջոկատը», իսկ 1-ին պատվավոր հորիզոնականում՝ 11-րդ դասարանցիների «Ժառանգներ» թիմը: Մասնակիցները պարգեւատրվեցին դպրոցի տնօրինության եւ ՀՀ ԱԻՆ դիպլոմներով:

ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանի խոսքերով՝ հրշեջ-փրկարարական հմտություններին եւ առաջին բուժօգնության հիմունքներին տիրապետելը կարեւոր է երեխաների համար՝ սեփական անվտանգությունն ապահովելու եւ անհրաժեշտության դեպքում ուրիշներին օգնություն ցույց տալու համար:

Դպրոցի տնօրեն Կարինե Զատիկյանը նշեց, որ նման միջոցառումները շատ կարեւոր են երեխաների իրազեկվածությունը բարձրացնելու եւ նրանց ոգեւորելու համար:

Միջոցառման կազմակերպիչներից աշխարհագրության ուսուցչուհի Ելենա Սարգսյանի վկայությամբ՝ նույնիսկ փոքր տարիքի երեխաներն էին խնդրում մասնակցել մրցաշարին, ինչը նշանակում է, որ նման մրցումներն ավանդական են դառնալու եւ օրինակ են ծառայելու մյուս դպրոցների համար:

Մրցաշարից հետո կայացած հիմնադիր ժողովում որոշում է կայացվել ստեղծել Հայաստանի պատանի փրկարարների ասոցիացիա: Երեխաների առաջարկությամբ՝ միաձայն՝ ասոցիացիայի պատվավոր նախագահ է ընտրվել ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանը:

Պետք է միշտ պատրաստ լինել

Այս օրերին ՀՀ ԱԻ նախարարությունում անցկացվում էին «Երկրաշարժ՝ երբ, որտեղ, ինչու: Դրա առանձնահատկությունները Հայաստանում: Երկրաշարժից պաշտպանությունը տանը եւ դպրոցներում» թեմայով լսումներ: Դրանք կազմակերպել էր ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունը: Քննարկումը վարում էր գործակալության պետի տեղակալ Աշխեն Թովմասյանը:

Ընդհանուր առմամբ՝ վերը նշված թեմաներով լսումներին մասնակցել է Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնական, ինչպես նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը ենթակա 160 դպրոցների ավելի քան 230 աշխատակից:

Լսումներին վերջին՝ յոթերորդ օրը բուռն քննարկում ծավալվեց այնպիսի արդի խնդիրների շուրջ, ինչպիսիք են դպրոցներում երկրաշարժից պաշտպանության կազմակերպումը, դրա համար անհրաժեշտ հնարավորությունները եւ այլն: Այսօրինակ միջոցառումները հնարավորություն են տալիս նաեւ բարձրացնելու դպրոցների անվտանգության հետ կապված տարբեր խնդիրներ՝ շենքերում տարհանման ելքերի ապահովում, հարակից բաց, ազատ տարածքների բացակայություն եւ այլն:

Հանդիպման ընթացքում զուգահեռներ անցկացվեցին Ճապոնիայում գրանցված վերջին ամենաուժեղ երկրաշարժերի եւ Սպիտակի երկրաշարժի միջեւ, ինչպես նաեւ ներկայացվեց Ճապոնիայի փորձը: Ուսուցիչները կիսվեցին նաեւ իրենց փորձով՝ վերլուծելով երկրաշարժի ժամանակ սեփական զգացողությունները եւ վարքագծում թույլ տված սխալները:

«ՍՊԾ» գործակալության սեյսմիկ ռիսկի նվազեցման վարչության գլխավոր մասնագետ Հասմիկ Կիրակոսյանը պատմեց երկրաշարժի վերաբերյալ անվտանգության վարքականոնների մասին: Ա. Թովմասյանը, ներկայացնելով երկրաշարժի առանձնահատկությունները ՀՀ տարածքում, նշեց, որ այսպիսով ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայությունը փորձում է դպրոցների ուսուցիչներին փոխանցել կուտակված փորձը: Սակայն իրավիճակները կարող են շատ տարբեր լինել, ուստի՝ պետք է միշտ պատրաստ լինել:

Լսումներին ներկա բոլոր մանկավարժներն էլ բարձր են գնահատել նման հանդիպումների նշանակությունը՝ ընդգծելով, որ դրանք կարեւոր են ուսուցիչների իրազեկման եւ պատրաստվածության մակարդակի բարձրացման համար: Հանդիպումների մասնակիցներն առաջարկել են ավելի հաճախ կազմակերպել նման միջոցառումներ, դասընթացներ անցկացնել նաեւ դպրոցներում:

Անվտանգության դպրոց կամ ինչպես գործել էքստրեմալ իրավիճակներում

Սկիզբը նախորդ համարում

Հիշե՛ք, որ կրակն ու ծուխը աստիճանավանդակով տարածվում են միայն ներքեւից դեպի վերեւ.

• Փորձեք հարեւանների հետ տեղայնացնել հրդեհի օջախը՝ օգտագործելով ներքին հրշեջ ջրածորակները կամ ձեռքի տակ եղած միջոցները, սակայն չմոռանալով մարդկանց անվտանգության մասին.

• Եթե հրդեհը հնարավոր չէ հանգցնել, ապա առանց խուճապ առաջացնելու շենքից դուրս բերեք մարդկանց, առաջին հերթին՝ երեխաներին ու ծերերին: Դրա համար օգտագործեք սանդղաբազուկները կամ պատշգամբների հրշեջ սանդուղքները.

• Անցնելով ծխապատված տեղամասերով փորձեք պահել շնչառությունը կամ քիթն ու բերանը ծածկել թաց սրբիչով, թաշկինակով.

Հիշե՛ք. Մարդկանց տարհանման համար վերելակների օգտագործումը խիստ վտանգավոր է:

• Եթե հնարավոր չէ շենքից դուրս գալ աստիճանավանդակով (թանձր ծխի ու ուժեղ կրակի պատճառով), ապա մնացեք բնակարանում: Պինդ փակված ու լավ քփեցված դուռը որոշ ժամանակ ձեզ կպաշտպանի բարձր ջերմաստիճանից ու ծխից.

• Այրման արգասիքներից չթունավորվելու համար կիպ փակեք դռների ճեղքերն ու օդափոխման բացվածքները թաց ծածկոցներով, սրբիչներով եւ այլն.

• Եթե ծուխն արդեն լցվել է բնակարան՝ մնացեք հատակին մոտ, քանի որ այնտեղ մաքուր օդն ավելի շատ է.

• Երբ ժամանեն հրշեջները՝ գրավեք նրանց ուշադրությունը: Բացեք պատուհաններն ու օգնություն կանչեք.

• Հրդեհից կարելի է պաշտպանվել նաեւ պատշգամբում (պատշգամբի դուռը պինդ փակելով) կամ լոգարանում՝ ներսից պարբերաբար դռան վրա ջուր լցնելով:

Հիշե՛ք. Ծխապատված սենյակում ոչ մի դեպքում մի օգտվեք սովորական հակագազից, քանի որ այն չի պաշտպանում ծխից:

Իրադրություն. հրդեհ վերելակում:
Հիմնական պատճառները.

• Վերելակախցիկի հատակին կամ վերելակային հորան նետված լուցկու, չմարված ծխախոտի մնացորդները.

• Էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը.

• Երեխաների խաղալը կրակի հետ:

Ձեր գործողությունները.

• Բռնկման առաջին իսկ հատկանիշների հայտնաբերման դեպքում անմիջապես հայտնեք վերելակի շահագործման համար պատասխանատու հերթապահին՝ սեղմելով խցիկում գտնվող «Կանչ» կոճակը.

• Եթե վերելակը շարժման մեջ է՝ ինքներդ մի կանգնեցրեք այն, այլ սպասեք կանգառի.

• Դուրս գալով խցիկից, ձեռքի տակ եղած առարկայով բլոկավորեք դռները, որպեսզի ոչ ոք չկարողանա կանչել վերելակը եւ հայտնվել ծուղակում.

• Խնդրեք հարեւաններին ահազանգել հրշեջներին եւ օգնել ձեզ մարելու այրման օջախը (եթե դա հնարավոր է).

• Կրակը մարելիս մի մտեք վերելակախցիկ, քանի որ այն կարող է ինքնակամայականորեն շարժվել՝ այրվող հաղորդալարերի կարճ միացման հետեւանքով.

• Վերելակախցիկը գտնվում է լարման տակ, այդ իսկ պատճառով այրման օջախը մարելու համար ջրի օգտագործումը վտանգավոր է: Այդ նպատակով պետք է օգտագործել չոր, խիտ գործվածք, ածխաթթվային կամ փոշե կրակմարիչ (մինչեւ օգտագործելը կարդացեք կրակմարիչի վրայի հրահանգը), չոր ավազ.

• Եթե հաղորդալարերի կարճ միացման հետեւանքով վերելակը կանգ է առել հարկերի արանքում, իսկ բռնկման օջախը գտնվում է վերելակախցիկից դուրս եւ այն հանգցնելն անհնար է, ապա աղաղակեք, հարվածեք խցիկի պատերին, օգնություն կանչեք.

• Փորձեք հովանոցով, բանալիներով կամ այլ առարկաներով բացել վերելակի դռները եւ դուրս գալ՝ օգնության կանչելով հարեւաններին.

• Վերելակից ինքնուրույն դուրս գալու անհնարինության դեպքում, մինչեւ օգնության տեղ հասնելը, փակեք քիթն ու բերանը թաշկինակով, հագուստի թեւքով՝ նախօրոք դրանք թրջելով ջրով, կաթով, նույնիսկ մեզով.

• Խուճապի չմատնվեք, պահպանեք հանգստություն եւ մի կորցրեք ինքնատիրապետումը:

Իրադրություն. հրդեհ ձեղնահարկում, պահեստանոցում, նկուղում:
Հիմնական պատճառները.

• Երեխաների խաղալը կրակի հետ.

• Անզգույշ ծխելը.

• Էլեկտրական հաղորդալարերի թրջվելուց (տանիքների կաթելու կամ նկուղների ջրալցման հետեւանքով) առաջացող կարճ միացումը.

• Բնակիչների կողմից ձեղնահարկերի, պահեստանոցների, նկուղների ուսումնասիրման (դիտարկման) համար բաց կրակի (լուցկի, մոմ, ջահ եւ այլն) օգտագործումը.

• Դյուրավառ հեղուկների, աերոզոլային փաթեթների սխալ պահպանումն ու դրանց հետ անզգույշ վարվելը.

• Ձեղնահարկերի, պահեստանոցների, նկուղների ծանրաբեռնումը զանազան անպետք իրերով, առարկաներով, մակուլատուրայով.

• Սառած խողովակների տաքացնելը բաց կրակի (ջահ, զոդման լամպեր եւ այլն) միջոցով.

• Եռակցման աշխատանքների կատարումն առանց անհրաժեշտ անվտանգության միջոցառումների իրականացման.

• Օժանդակ շինություններում մշտական բնակության վայր չունեցող անձանց բնակվելը (հատկապես գիշերային ժամերին):

Ձեր գործողությունները.

• Անմիջապես ահազանգեք հրշեջներին, հրդեհի մասին տեղեկացրեք հարեւաններին, նրանց հետ միասին փորձեք խոչընդոտել կրակի տարածմանը՝ օգտագործելով ներքին հրշեջ ջրածորակները եւ ձեռքի տակ եղած միջոցները.

• Հրդեհներից տուժածների 80%-ը խեղդվում են ծխից կամ այրման ժամանակ

առաջացող թունավոր նյութերից, այդ իսկ պատճառով պահեստանոցների, նկուղների հրդեհների ժամանակ մի փորձեք դուրս փախչել ծխապատված աստիճանավանդակներով.

• Եթե դուք զբաղված չեք հրդեհաշիջման աշխատանքներով, ապա մնացեք բնակարանում մինչեւ հրշեջների ժամանելը: Աղաղակներով եւ այլ կերպ պատուհանից կամ պատշգամբից փորձեք հրավիրել անցորդների ուշադրությունը.

• Եթե ձեղնահարկի, նկուղի դռները փակ են, ապա հեռախոսով կամ վերելակի շահագործման համար պատասխանատու հերթապահի միջոցով կանչեք շենքի տեխնիկին (ում մոտ գտնվում են բանալիները): Դրա անհնարինության դեպքում ինքներդ փորձեք կոտրել դուռը.

• Միացրեք շենքի մուտքի ծխահեռացման համակարգը, որպեսզի ստեղծեք օդի դիմհար, ինչը կխոչընդոտի կրակի տարածմանը հարկերով.

• Մի՛ կոտրեք աստիճանահարթակների պատուհանները, որպեսզի միջանցիկ քամին չբորբոքի կրակը:

Շարունակելի

Սերգեյ Հայրապետյան
ՀՀ ԱԻՆ ՊՀԵԼՏԱՏ ՀՀՎՀՔ

Շնչող պատուհաններ

Ինչի՞ համար են պատուհանների ներհոսման փականները

Որոշ սպառողներ, որոնք հին պատուհանները փոխարինել են ժամանակակից մետաղապլաստիկականներով, կարծում են, թե վերջիններս որակյալ չեն: Եւ դա այն պատճառով, որ պատուհանները լալիս են (կոնդենսատը՝ պատուհանի դրսի մասում): Նույնպիսի խնդրի են բախվում հաճախ նաեւ փայտե պատուհաններ ունեցող հաճախորդները: Ժամանակակից մետաղապլաստիկական կամ փայտե պատուհաններն այնքան հերմետիկ են, որ օդափոխություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ պատուհանի փեղկերը որոշ ժամանակով բացում ես: Եթե այդ սենյակն ամեն օր չի օդափոխվում, ապա այնտեղ ավելցուկային խոնավություն է կուտակվում: Խոնավության աղբյուրները բնակարանում առավել քան բավական են: Օրինակ՝ ծաղիկները, լվացքի մեքենայի օգտագործումը, սննդի պատրաստումը, խոնավ մաքրումը: Հասուն մարդը քնի ընթացքում անջատում է մոտ 500 գրամ ջուր գոլորշու տեսքով: Կարելի է ենթադրել, որ երեք հոգուց բաղկացած ընտանիքի կենսագործունեությամբ մեկ օրվա ընթացքում բնակարանի տարածություն մեջ 3-7 լիտր ջուր է առաջանում: Այդ խոնավությունը պետք է բնակարանից դուրս բերվի օդափոխության միջոցով. բնակարանի օդը պետք է փոխարինվի փողոցի օդով օրական երկու անգամ: Իսկ ի՞նչ անել, եթե սենյակը ժամանակին օդափոխելու հնարավորություն չկա:

Փողոցում փոշի է, շատ են միջատները: Երբեմն տարածքի օդափոխումը դժվարանում է, քանի որ տանը փոքրիկ երեխաներ կան, եւ մեծահասակներն անհանգստանում են, որ միջանցիկ քամիները կարող են վնասել նրանց առողջությունը:



Օգնության է հասնում օդակարգավորման համակարգը: Շատ հաճախորդներ ընտրում են հենց այդպիսի հնարավորություն ունեցող պատուհաններ եւ ընդմիշտ լուծում իրենց բնակարանի օդափոխության հարցը:

Օդակարգավորման համակարգը ենթադրում է օդափոխիչ փականի տեղադրումը շրջանակի եւ փեղկի միջեւ՝ մետաղապլաստիկական պատուհանների արտադրության փուլում:

Այդ փականի միջոցով փողոցի օդը մտնում է սենյակ: Անցնելով փեղկի ու շրջանակի միջով, նույնիսկ սառն օդը ձեռք է բերում սենյակային ջերմաստիճան: Դրա շնորհիվ բնակարանում ապահովվում է հարմարավետ ջերմաստիճան ունեցող թարմ օդի հոսք նույնիսկ փակ պատուհանների պարագային:

Ուրիշ ինչի՞ համար են հարկավոր պատուհանների ներհոսման փականները

Մետաղապլաստիկական հերմետիկ պատուհանների տեղադրման ժամանակ խախտվում է օդափոխությունը, որը նախատեսված է նախագծով, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների: Վատանում է բնակվելու հարմարավետությունը. բարձրանում է խոնավությունը, ցածրանում է օդի որակը, կառուցվածքի սնկային ախտահարման հավանականություն է ի հայտ գալիս:

Պատուհանների ներհոսման փականները թույլ են տալիս ապահովելու օդի նորմատիվ հոսքը փակ պատուհանի դեպքում՝ միաժամանակ պահպանելով մետաղապլաստիկական պատուհանների բոլոր առավելությունները:

Ինչո՞ւ չօգտվել ճեղքային կամ միկրո օդափոխությունից:

Այդպիսի օդափոխության դեպքում պատուհանը բացվում է ամբողջությամբ, ինչն առաջացնում է միջանցիկ քամիներ, ջերմաստիճանի կտրուկ տատանումներ, աղմուկի մակարդակի բարձրացում: Այդպիսի օդափոխությունը հսկողություն է ենթադրում, իսկ օդափոխության ներհոսման փականը, աղմկապաշտպան դեր կատարելով, աշխատում է անընդհատ եւ ապահովում օդի հոսքը դեպի ենթառաստաղային շերտ՝ այդպիսով բացառելով միջանցիկ քամիներն ու ջերմաստիճանի տատանումները:

Ինչի՞ համար է հարկավոր պատուհանի կլիմայական փականն ամռանը

Աշխատանքի գնալով եւ պատուհանները բաց թողնելով, դուք իջեցնում եք բնակարանի անվտանգության մակարդակը. սենյակ կարող են մտնել փոշին, խոնավությունն անձրեւի ժամանակ, միջատները: Իսկ եթե պատուհանները, որոնք եղանակային փական չունեն, փակ են, ապա տարածքում կուտակվում են վնասակար նյութեր, որոնք գոյանում են լաքապատ, ներկված, սինթետիկ մակերեւույթներից առաջ եկած գոլորշացումներից, հատկապես վերանորոգումից հետո:

Պասիվ ներհոսման համակարգերի աշխատանքի արդյունավետությունը, որոնք գործում են սենյակի դրսի ու ներսի ճնշումների տարբերության հիմքի վրա, առավելագույնն է աշուն-ձմեռ ժամանակահատվածում, երբ ճնշման տատանումի (քարշի) տարբերությունն առավել մեծ է: Տաք եղանակին ճնշման տատանումը նվազագույն է, համապատասխանաբար՝ արդյունավետությունն էլ կնվազի:

Բացի դրանից, քարշը, որն ստեղծվում է ճնշման տարբերության հաշվին, կախված է մի շարք արտաքին գործոններից. տան դիրքից, շենքի բարձրությունից, տարատեսակ կլիմայական երեւույթների առկայությունից կամ բացակայությունից եւ այլն:

Արամ Հայրապետյան
«էյ-Ի-Ջի սերվիս» ՓԲԸ
Հասարակայնության հետ
կապերի բաժին

հոգեբանի սենյակ

Տղան խաղում է տիկնիկներով...

Ψ Տղա երեխան հաճույքով ճաշիկ է պատրաստում իր տիկնիկի համար, փոխում է նրա շորերը եւ այլն: Արդյո՞ք պետք է ծնողներն անհանգստանան այդ հարցով, թե՞ ոչ: Վերջին ժամանակներս առավել արդիական են դարձել սեռային դաստիարակության խնդիրները, որոնք հասկանալն իսկապես էլ շատ կարեւոր են երեխայի մեջ առողջ սեռային գիտակցություն ձեւավորելու համար:

Խաղերը, որոնք նախատեսված են հակառակ սեռի համար, ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ երեխայի ներդաշնակ եւ ազատ դաստիարակվելու եւ մեծանալու վրա:

Մինչ հուզող հարցերին անդրադառնալը, կցանկանայի խոսել տիկնիկ երեւույթի մասին. ի՞նչ է այն իրենից ներկայանում եւ ինչի՞ համար է: Այս հարցերի պատասխաններն ունենալով, մենք ավելի լավ կարող ենք պատկերացնել տիկնիկի դերը եւ այն հոգեվիճակը, որ երեխան ունենում է նրա հետ շփվելիս:

Տիկնիկը տարբեր դարաշրջաններում տարբեր նշանակություն է ունեցել. այն ծառայել է թե՛ որպես խաղալիք, թե՛ որպես պաշտամունքի առարկա, թե՛ որպես ծիսակատարության մի մասնիկ եւ այլն: Տիկնիկը մարդու կրկնօրինակն է, նրա նմանակը:

Տիկնիկը մարդուն առանձնացնում է իրական աշխարհից, եւ նրա միջոցով մարդը ճանաչում է արտաքին աշխարհն ու մտնում է երկխոսության մեջ նրա հետ, բացի դրանից էլ, մանկության տարիներին տիկնիկի միջոցով երեխան ճանաչում է իր «իրական ես»-ը, իր սեռը, գենդերային եւ սոցիալական դերը:

Տիկնիկը մանկության տարիներին կարող է դառնալ երեխայի ամենամտերիմ ընկերը: Նրանք տիկնիկին վստահում են եւ պատմում են շատ բաներ, ինչն ամաչում կամ վախենում են պատմել ծնողներին: Եթե մեծերն իրենց ապրումների մասին խոսում են ընկերների, մտերիմների հետ կամ օրագրի մեջ են գրանցում, ապա փոքրիկն այդ հարավորությունները չունի: Նրա համար վստահելի ընկեր դառնում է տիկնիկը, որը կարողանում է լսել առանց քննադատելու եւ նախատելու: Երեխան տիկնիկին կարող է վերագրել մարդկային հատկություններ: Տիկնիկն անցումային մի օղակ է, որը հնարավորություն է տալիս երեխային աստիճանաբար առանձնանալ մայրիկից: Տիկնիկի հետ ստեղծված շփման հմտությունները երեխան աստիճանաբար կիրառում է արդեն մանկապարտեզում իր իրական ընկերների հետ: Տիկնիկի հետ շփման ժամանակ երեխան ստանձնում է տարբեր դերեր, տիկնիկը մեկ իր համար ընկեր է, մեկ դառնում է երեխա, մեկ էլ մայր: Այսինքն՝ երեխան փոխում է իր դերերն ակտիվից պասիվ կամ ընդհակառակը: Տիկնիկը միշտ արձագանքում է երեխային այնպես, ինչպես ինքն է ուզում: Դա հնարավորություն է տալիս երեխային վերահսկել երկխոսության ընթացքը:

Մենք արդեն որոշակի պատկերացում կազմեցինք, թե ինչ դեր կարող է ունենալ տիկնիկը երեխայի կյանքում, անկախ այն բանից, երեխան տղա՞ է, թե՞ աղջիկ: Այժմ անդրադառնանք մեզ անհանգստացնող հարցին: Արդյո՞ք պետք է ծնողները մտահոգվեն կամ անհանգստանան, երբ իրենց տղա երեխան խաղում է տիկնիկներով: Ավանդական տեսակետից աղջիկների խաղալիքներն են համարվում տիկնիկները, իսկ տղաների համար դրանք մեքենաներն են, ատրճանակները, ավելի ագրեսիվ խաղային տարբերակները: 3-4 տարեկան երեխաները խաղում են միասնաբար, այս տարիքում այդքան վառ արտահայտված չեն սեռային առանձնահատկությունները, այդ թվում նաեւ խաղալիքների ընտրությունները: Աստիճանաբար աղջիկներն ընտրում են այլ բնույթի խաղալիքներ, իսկ տղաներն էլ՝ այլ: Այս հարցում մեծ դեր ունի նաեւ ծնողների մասնակցությունը, քանի որ ծնողները երեխայի սեռն իմանալուն պես արդեն գնում են համապատասխան խաղալիքներ: Քանի որ ցանկանում են արդեն փոքր տարիքից երեխային համապատասխան կողմնորոշումով ուղղորդել:

Քիչ չեն դեպքերը, երբ տղա երեխաներն իրենց կողքին պառկեցնում են քնելու արջուկին, նապաստակին, տիկնիկին եւ այլն: Կամ հասակակիցների հետ խաղալիս ստանձնում են եւ հայրիկի, եւ մայրիկի դերը: Այստեղ ծնողները չպետք է մոռանան, որ երեխայի երեւակայությունն անսահման է ու վառ: Ծնողները բացարձակապես չպետք է անհանգստանան, երբ իրենց տղա երեխան փոքր հասակում խաղում է տիկնիկներով: Այստեղ առավել պետք է ուշադրություն դարձնել, թե երեխան ինչ դեր է ստանձնում խաղի ժամանակ: Եթե նա կրկնօրինակում է հայրիկի կերպարը, ապա առավել եւս պետք չէ անհանգստանալ, քանի որ նրա մոտ ձեւավորվում են ապագա հոգատար հայրիկին բնորոշ առանձնահատկություններ: Եթե նա ստանձնել է եղբոր դեր, նույնպես անհանգստանալու կարիք չկա՝ նույն պատճառով: Խաղի ժամանակ երեխան փորձում է գտնել իր ես-ը, այն ձեւավորել եւ կատարելագործել:

Եթե 7-8 տարեկան տղաներն են սկսում հետաքրքրվել եւ խաղալ տիկնիկներով, այս ժամանակ ծնողները պետք է առավել ուշադիր լինեն: Այս խաղերի ժամանակ երեխան մտնում աղջկա դերի մեջ, կրկնօրինակում է նրա վարքագիծը, դրսեւորում հագնվելու, շպարվելու եւ աղջկական այլ առանձնահատկություններ:

Հարկ է, ուրեմն, նախեւառաջ դիմել էնդրոկրինոլոգին, քանի որ գիտենք՝ յուրաքանչյուր մարդու մեջ կան եւ կանացի, եւ տղամարդկային հորմոններ: Տղամարդու եւ կնոջ հորմոնների բաշխումը, շատ գործոններից կախված, կարող է սխալ ընթանալ, ինչն էլ կարող է հանգեցնել խնդիրների: Այնուհետեւ պետք է դիմել հոգեբանի, որը կօգնի ձեզ հասկանալ երեխային. ի՞նչ աշխարհով է նա ապրում, ի՞նչ ձգտումներ ունի եւ վախենո՞ւմ է արդյոք դրանք կյանքի կոչել, թե՞ ոչ:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

1. Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության հաշվառման, վերլուծության եւ քարոզչության բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.1-60):

Իրականացնում է հրդեհների, տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը եւ դրանց պատճառների վերլուծությունը՝ առաջացմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման միջացառումների մշակման համար, ինչպես նաեւ իրականացնում է քարոզչության՝ համագործակցելով զանգվածային լրատվության միջոցների, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• **Մրցույթը կկայանա 17.04.2013 թ.՝ ժամը 10:00-ին,** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

2. Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության Սյունիքի մարզային հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության տեսչական բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.1-58):

Իրականացնում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային եւ տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն, տալիս է բնակավայրերի, շենքերի եւ շինությունների նախագծման, կառուցման եւ շահագործման, հիմնանորոգման ու վերակառուցման ժամանակ հրդեհային եւ տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կիրառման մասին եզրակացություններ:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• **Մրցույթը կկայանա 18.04.2013 թ.՝ ժամը 10:00-ին,** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

3. Արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության աղետների ռիսկի գնահատման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 34-3.2-77):

Մասնակցում է աղետների ռիսկի գնահատման բնագավառում նախարարության քաղաքականության մշակման եւ իրականացման աշխատանքներին, աղետների ռիսկերի գնահատման ուղղությամբ կատարվող մոնիթորինգային աշխատանքների պլանավորմանը եւ իրականացմանը, ինչպես նաեւ՝ աղետների ռիսկերի գնահատման ուղղությամբ պետական կառավարման մարմինների հետ համատեղ կատարվող ուսումնասիրություններին եւ հետազոտություններին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• **Մրցույթը կկայանա 03.05.2013 թ.՝ ժամը 10:00-ին,** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

1.2.3. կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար նաեւ պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

• սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ) ենթակետում նշված՝ իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

• համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

• դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 22.03.2013 թ.

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ **(ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-77-30)**:

Ծերացումը հետաձգվում է

Ո՞վ չի վախենում ծերանալուց, եւ որ ամենակարեւորն է, այն ավերիչ հետքերից, որոնք ծերությունը թողնում է մարդու առողջության եւ արտաքինի վրա: Հատկապես վախենում են կորցնել իրենց գեղեցկությունն ու երիտասարդությունը գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: Դրա համար նրանք գնում են թե՛ բժիշկների, թե՛ գուշակների մոտ, ովքեր կխոստանան պահպանել իրենց հավերժ երիտասարդությունը:

Այդ ցավոտ թեմայի շուրջ նոր խոսք ասացին գիտնականները, ովքեր համոզված են, որ այժմ, գենետիկ միջամտության ճանապարհով, հնարավոր է կանգնեցնել ծերացումը: Առայժմ այդ ամենը տեսություն է, բայց նման ուսումնասիրությունները կարող են հույս հաղորդել, որ շուտով հնարավոր կլինի գնել ծերացման գործընթացները դանդաղեցնող կամ կանգնեցող միջոցներ: Աստեղ հարցը բնավ գեղեցկությունը չէ, այլ այն, որ գիտական հետազոտությունները կարող են օգնել ապրել երկար տարիներ՝ լինելով առողջ եւ զերծ մնալով տարբերային այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք են մտագարությունը, սիրտ-անոթային հիվանդությունները, քաղցկեղը, որոնք խախտում են կյանքի նպաստավոր ընթացքը:

Լոնդոնյան թագավորական քոլեջի հետազոտողները մարդու գեներում «անջատիչ» են հայտնաբերել: Այն սահմանում է մարդու ծերացման արագությունը: Հետեւաբար, գիտնականները կարծում են, որ իրենք կկարողանան ծերացումը դանդաղեցնող կամ կանգնեցնող միջոց գտնել:

Օրգանիզմում չորս միավոր նման «անջատիչներ» կամ «ծերացման գեներ» կան: Շատ գործոններ կան, որոնք կարող են դրանք ձեւավորել օրգանիզմում եւ վերահսկել ողջ կյանքի ընթացքում: Մանկությունից սկսած կարելի է ազդեցություն թողնել դրանց զարգացման վրա, իսկ բոլոր գործընթացների հետագա ուսումնասիրությունները թույլ կտան հատուկ դեղամիջոցներ ստեղծել: Բուժումը թույլ կտա հաղթահարել ծերանալու հանդեպ վախը, քանի որ կկասեցնի դրա գործընթացները:

Ի դեպ, գիտնականները դեռ վաղուց գիտեին, որ արտաքին գործոններն ազդում են մարդու ծերացման ճանապարհի վրա: Այժմ բրիտանացի գիտնականներն այդ հարցում կարողացան ավելի առաջ շարժվել: Առայժմ նրանք տալիս են հետեւյալ խորհուրդները: Նախ, ծերացումը կարող է հետաձգել քիչ կալորիաներով սնունդը: Նման ենթադրություններն արվել են մկներին, առնետներին եւ շներին հետեւելու արդյունքում: Նրանք, ովքեր սնվել են առանց սահմանափակումների, մեկ երրորդով ավելի կարճ են ապրել, քան քչակերներն ու խիստ դիետային հետեւողները: Հետազոտողները կալորիաները համարում են երիտասարդության թշնամի: Չէ՞ որ դրանք էներգիայի վերածելու համար թթվածին է անհրաժեշտ: Գործընթացում արտադրվում են ազատ ռադիկալներ, որոնք էլ հենց նպաստում են ծերացմանը:

Օրգանիզմին դիետայից բացի նաեւ խնամք է անհրաժեշտ: Այնպես որ, պետք չէ սեփական մարմինը ենթարկել վնասակար սովորություններին եւ այլ էքստրեմալ փորձարկումներին, չէ՞ որ դրա վրա առանց այն էլ ազդեցություն է թողնում տագնապալի էկոլոգիական իրավիճակն ու ժամանակակից հասարակությունում սթրեսային իրավիճակների բազմազանությունը:



Ոչ միայն ժամանակակից գիտնականները, այլեւ գիտության դասականներն են փորձել գտնել հավերժ երիտասարդության գաղտնիքը: Օրինակ, կենսաբան Մեչնիկովը, որն ապրում էր 19-րդ եւ 20-րդ դարերի սահմանագծին, պնդում էր, որ ծերացման է տանում աղիքներում սննդի փտումն ու քայքայումը: Նման խնդիրներից կօգնի ազատվել կեֆիրը: Դրա կաթնաթթվային մանրէները փախակերպում են այն գերծընթացները, որոնք առաջանում են սննդի մարսողության ընթացքում: Դրա համար անհրաժեշտ է օրական երկու բաժակ կեֆիր խմել: Մեչնիկովը կարծում էր, որ նման մեթոդը 30 տարով կերկարացնի մարդու կյանքը:

Ծերացման բարդ գործընթացների վրա ուշադրություն է դարձրել նաեւ բնախոս Պավլովը: Նա ենթադրում էր, որ մարդու ծերացումը զգալու արագության վրա անմիջական ազդեցություն է թողնում նյարդային համակարգի վիճակը: Հետեւաբար, Պավլովը խորհուրդ էր տալիս խնայել նյարդերը: Երկարակեցության գրավականը կդառնա նյարդային բջիջների բարձր անվտանգությունը:

Որտեղի՞ց է եկել Չելյաբինսկի երկնաքարը

Կոլումբիացի աստղագետները պարզել են այն երկնաքարի ծագումնաբանությունը, որը փետրվարի կեսին ընկել եր Ռուսաստանի կենտրոնում:

Օգտագործելով ասուպի ընկնելու սիրողական նկարահանումները՝ գիտնականները կարողացել են սահմանել տիեզերական մարմնի հետագիծը Երկրի մթնոլորտով թռչելիս, այնուհետեւ վերակառուցել դրա ուղեծիրը Արեգակնային համակարգում:

Երբ քարե հսկան թռավ Չելյաբինսկի վրայով, դրա պայթյունի ալիքը կոտրեց տների եւ շենքերի հարյուրավոր պատուհաններ, ինչից հետո մոտ հազար տեղի բնակիչներ դիմեցին շտապօգնությանը:

Օգնեցին տեսաձայնագրիչները

Ասուպի անկման բազմաթիվ նկարահանումներ արվել են բջջային հեռախոսներով, ավտոմեքենաների տեսաձայնագրիչներով եւ գաղտնի տեսահսկման սարքերով, այնուհետեւ դրանք տեղադրվել են ինտերնետում: Այդ տեսանյութերը հետազոտությունների ժամանակ գիտնականներին շատ են օգնել, քանի որ տեսաձայնագրիչներն արձանագրել են միջադեպի ճշգրիտ ժամն ու ամսաթիվը:

Օգտագործելով այդ տեսանյութերն ու Չեբարկուլ լճում ասուպի անկման ենթադրյալ վայրը՝ կոլումբիական Մեդելին քաղաքի Անտիոքյան համալսարանի գիտնականներ Յորգե Զուլուագան եւ Իգնասիո Ֆերինը, կիրառելով պարզ եռանկյունաչափությունը, կարողացել են պարզել երկնաքարի բարձրությունը, արագությունն ու դիրքը՝ Երկրին մոտենալիս:

Արեգակնային համակարգում երկնաքարի ուղեծրի վերակառուցման համար նրանք օգտագործել են Երկրի մթնոլորտ մտնելիս դրա հետագծի վերաբերյալ վեց տարբեր տվյալներ: Դրանցից շատերը կապված են այն պահի հետ, երբ ասուպը դարձավ բավական վառ՝ տեսանյութում նկատելի ստվեր գցելու համար:

Այնուհետեւ աստղագետները ստացված տվյալները տեղադրեցին հատուկ ծրագրի մեջ, որը մշակվել է ԱՄՆ-ի ռազմածովային աստղադիտարանում: Նրանք օգտագործել են նաեւ վաշինգտոնյան Կարնեգիի համալսարանի գիտնական Զոն Չեմբերսի մշակած Լ«Մերկուրի» ծրագիրը:

Ապոլոններ, ամուրներ, ատոններ

Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ընկած մարմինը պատկանում է քարե ասուպների հայտնի տեսակին, որոնց անվանում են ապոլոններ: Դրանց ուղեծրերը հատում են Երկրի ուղեծիրը արտաքին կողմից:

Երկրի մոտակայքում գտնվող, ներկայումս հայտնաբերված գրեթե 9,7 հազար երկնաքարերից 5,2 հազարը համարվում են «ապոլոններ»: Երկնաքարերը, կախված ուղեծրի տեսակից, բաժանվում են խմբերի՝ ապոլոններ, ամուրներ եւ ատոններ:

Կենտյան համալսարանի դասախոս Ստեֆան Լոուրիի խոսքերով, կոլումբիացի գիտնականների թիմը հրաշալի է աշխատել՝ նման կարճ ժամանակահատվածում հրապարակելով իրենց հետազոտությունների արդյունքները:

«Այն (ընկած ասուպը) իսկապես նման է Ապոլոնի խմբի երկնաքարին»,- հայտնեց նա Բի-բի-սի-ին:

«Ասուպի էլիպտիկ ուղեծիրը՝ թեքման փոքր անկյունով, վկայում է, որ այն առաջացել է Արեգակնային համակարգում՝ առավել հավանական է՝ Մարսի եւ Յուպիտերի միջեւ գտնվող երկնաքարային գոտում, - շարունակում է Լոուրին: - Հնարավոր է, մեծ ինֆորմացիա ունենալով, մենք կկարողանանք պարզել, թե երկնաքարային որ գոտուց է եկել ընկած ասուպը»:

Բուժվել է ՄԻԱՎ-ով ծնված երեխան



Ամերիկյան առողջապահության ինստիտուտի ներկայացուցիչ էնտոնի Ֆոսին ասաց, որ արյան մեջ ՄԻԱՎ-ով ծնված երեխան հնարավոր է, որ ապաքինվել է ավելի արագ եւ հզոր բուժման միջոցով, քան նախատեսված էր երեխաների համար:

Եթե արդեն 2,5 տարեկան դարձած երեխան պահպանի առողջությունը, կարելի կլինի խոսել ՁԻԱՀ-ից բուժվելու երկրորդ հայտնի դեպքի մասին:

Մանկաբույժ Հաննա Գեյի խոսքերով, մոր արյան մեջ ՄԻԱՎ-ը հայտնաբերվել է միայն նախածնային առաջին ցավերի ժամանակ, եւ երեխային կյանքի առաջին 30 օրերի ընթացքում, մինչեւ նրա արյան մեջ վարակի հայտնաբերումը, երեք տեսակի դեղերով կաթիլային սրսկումներ էին անում:

Ըստ մանկաբույժի, այժմ երեխայի արյան մեջ միայն վարակի հետքերն են մնացել: Սակայն նա զգուշացնում է, որ անգամ համապատասխան դեղերի ընդունման դադարեցումից մեկ տարի անց էլ չի կարելի երաշխավորել ապաքինումը:

Մանկաբույժ Դեբորա Պերսոն ենթադրում է, որ վաղ բուժումը, ըստ էության, ՄԻԱՎ-ին թույլ չտվեց, այսպես կոչված, «քնած բջիջներ» ձեւավորել, որոնք, դեղերի ընդունումը դադարեցնելուց հետո, հիվանդության վերածնման պատճառ են դառնում:

Պերսոի հետազոտության ընթացքում երեխան գրեթե բուժված է համարվել: Այժմ, նրա խոսքերով, պետք է ուսումնասիրություն կատարվի, որի ընթացքում ՁԻԱՀ-ի բարձր ռիսկի ենթարկված այլ երեխաները նույնպես կբուժվեն այդ եղանակով՝ պարզելու համար, թե որքանով է նման բուժումն արդյունավետ:

Այժմ ՁԻԱՀ-ից բուժվելու միակ հայտնի դեպքը Սան Ֆրանցիսկոյի բնակիչ Տիմոտի Ռոուի ապաքինումն է, որին ՄԻԱՎ-ի նկատմամբ հազվագյուտ դիմադրողականություն ունեցող ոսկրածուծ են փոխպատվաստել:

արտակարգ ժամանց

Զարմանալի աշխարհ

Սոված «հանցագործը»

Օրերս ամերիկյան Նյուքասլ քաղաքում ձերբակալվել է մի տղամարդ, որն 9 ագամ զանգահարել է «911» արագ արձագանքման ծառայություն, որպեսզի չիզբուրգեր պատվիրի: Տեղի ՁԼՄ-ների հաղորդագրությունների համաձայն, 52-ամյա Գրեգորի Ձեկսոնը արդեն խնդիրներ ունեցել է ոստիկանության հետ, բայց ոչ այդքան անհեթեթ:

«911»-ի հեռախոսավարի՝ Ձեկսոնին բացատրելու բազմաթիվ փորձերը, որ «911» ծառայությունը չիզբուրգերի պատվերներ չի ընդունում, եւ որ առանց լուրջ պատճառի տվյալ հեռախոսահամարով պետք չէ զանգահարել, անհաջող անցան: Դրա հետեւանքով հեռախոսավարի նյարդերը չդիմացան եւ նա Ձեկսոնի «չարաճճիությունների» մասին



հայտնեց ոստիկաններին, որոնք կարճ ժամանակ անց այցելեցին համառ ամերիկացուն եւ ձերբակալեցին նրան:

Լրագրողները նշում են, որ ԱՄՆ-ում շատ հաճախ են ամենատարօրինակ պատճառներով դիմում «911» ծառայությանն ու ոստիկանությանը: Օրինակ՝ հարազատներին կամ իրենց սթրեսից հանելու խնդրանքով, հեռուստացույցի փչանալու դեպքում, տարբեր ուտեստներ պատվիրելու համար եւ այլն:

Հերոս շունը

Լեհ փրկարարները հայտնում են, որ փոքր բակային շունը փրկել է կյանքը 3-ամյա մի երեխայի, որը ցրտաշունչ ձմռան գիշերով դուրս էր եկել տնից եւ կորել:

Փրկարարները Ձուլիա անու-

նով աղջկան գտել էին հաջորդ օրվա առավոտյան՝ տնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ ճահճային հատվածում, իսկ նրա կողքին նստած էր չորքոտանի «փրկարարը»:

Ցրտահարությունից տուժած երեխան ներկայումս գտնվում է հիվանդանոցում: Գիշերն այդ շրջանում օդի ջերմաստիճանն իջել էր մինչեւ -5 0C:

Երեխային գտած փրկարարներից մեկը հայտնեց, որ շունն ամբողջ գիշերվա ընթացքում տաքացնում էր երեխային՝ թույլ չտալով, որ փոքրիկ Ձուլիան սառչի եւ մահանա ցրտից:

Ամբողջ գիշերը տեւած որոնողափրկարարական աշխատանքներին 200-ից ավելի մարդ էր մասնակցում: Ենթադրվում է, որ երեխան մի քանի ժամ շարունակ թափառում էր լեհական Պյեվժին գյուղի մոտ գտնվող անտառում, մինչեւ ուժասպառ լինելը: Վերջին անգամ ծնողները երեխային տեսել էին տան բակում՝ ինչ-որ շան հետ խաղալիս:

Անսահման «սեր»

Արգենտինական Մար դել Պլատա քաղաքի բնակիչն իր «անձնազոհությամբ» ապշեցրել է ինտերնետ-հանրությանը: Նրան կարելի էր անգամ հերոսի կոչում շնորհել, եթե «փրկվածն» անշունչ առարկա չլիներ:

«Անվախ» լատինամերիկացին կարկտի ժամանակ փորձել էր սեփական մարմնով պաշտպանել իր ավտոմեքենան: Տղամարդն առանց վարանելու նետվեց փրկելու իր «սիրելիին»՝ ընտրելով բավական առանձնահատուկ ռազմավարություն:

Պառկելով մեքենայի տանիքին՝ նա սկսեց արագորեն թափահարել ձեռքերն ու ոտքերը՝ 20 րոպե շարունակ:

Հայտնի չէ, թե որքանով էր արդյունավետ նման յուրատեսակ միջոցը, բայց ակնհայտ է, որ տղամարդը չկարողացավ պաշտպանել իր մեքենայի կապոտն ու բեռնախցիկը, դեռ ավելին, հենց ինքը փրկության կարիք ունեցավ:

Այդ օրը որոշ կարկտահատիկներ հավի ձվի մեծություն ունեին: Այնուամենայնիվ, «կարկտահարված» արգենտինացուն չհաջողվեց իրականացնել փրկչի իր «առաքելությունը»:

Ապուրի առեղծվածը

Պոլտավսկայա գյուղի բնակիչն ապուր է գողացել իր հարեւանի տնից:

25-ամյա տղամարդը հարեւանի տուն էր մտել, որպեսզի ծխախոտ խնդրեր նրանից, սակայն հանցագործության «զոհը» տանը չէր: Այնուամենայնիվ, երիտասարդը որոշեց դատարկ ձեռքով չհեռանալ հարեւանի տնից եւ իր հետ վերցրեց գազօջախին թողած կաթսայով ապուրը: Նա վերցրեց թարմ ուտեստն ու տուն տարավ, որտեղ իրեն էին սպասում խնջույքի հավաքված ընկերները:

«Գողոնի» կորուստը նկատեց հարեւանի քույրն ու անմիջապես դիմեց ոստիկանությանը՝ պահանջելով գտնել իր եղբոր ապուրը: Օպերատիվ գործողությունների արդյունքում ոստիկանները գտան չարագործին, սակայն ենթադրյալ գողը հրաժարվեց ընդունել իր մեղքը, քանի որ արդեն կերել էր իր գլխին պատուհաս դարձած ապուրը, իսկ կաթսան, ըստ նրա, իր տուն կարող էին գցել իր չուզողները:

Կրասնոդարի շրջանի ոստիկանությունից չտեղեկացրեցին, թե ինչ պատժամիջոցներ կկիրառվեն անմեղ գողի նկատմամբ: Նրանք նաեւ չեն նշում, թե ինչ տոն էր այդ օրը «հանցագործի» տանը:

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Մ	Ս	Ս
Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Ֆ	Ֆ	Ֆ	Ց	Ց	Ց	Գ	Գ		Ա	Ա	Ա	Ա
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ո	L	L	Ն			Տ
Տ	Ր	Ր	Դ	Ր	Ր		Ո	Ո		Է	Է	
	Ա	Ա	Ն	Տ	Տ	Տ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
Ն	Ն	Ն			Ի	Ի	Ե	Ե	Ե	Ե	Մ	Ի
Ե	Ս	Ս	Ս	Ս	Ն	Ր	Ր		Ր		Ա	Ա
Ր		Ի	Ի	Ի		Ա	Ա	Պ		Կ		Կ
Կ	Կ	Ե	Ն	Ն	Ն	Ն	Տ	Ի	Ի	Ի	Ի	
Ա	Ա		Գ		Ե			Ղ	Կ	Ր	Ր	Փ
	Ն	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Ձ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Տ	Տ	Տ	Ր	Կ	Կ	Կ
ՈՒ	ՈՒ	ՈՒ	ՈՒ	ՈՒ	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ա	Ա
Ր	Ր	Ր	Ր	Շ	L	L	Ս	Ս	Ս	Ս	Ն	Ն

Բնակչության շերտ	Կիսամութ	Հին հայկական օրացույցի ժամանուն	Միջատ	Պետական պաշտոնյա	Արեւելյան թմբուկ	... Հովնաթան	Հատապտուղ	Հյուրանոցի սենյակ	..., հայտարար	Ամբողջ, բոլոր	Թաթար զորապետ	Ազգություն Ռուսաստանում
⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩	⇩
Չափածո, արձակ ավանդազրույց												
⇩												
	Համաստեղություն					... Դեմիրճյան		Հայ բանաստեղծ՝ Եղիշե ...			Քաղաք Գերմանիայում	Գիշատիչ թռչուն
	⇩				Սախարովի կինը՝ ... Բոներ	⇩	Հայկական գինի	⇩		Քաղաքանավահանգիստ Եմենում	⇩	⇩
		«Ժիզել» բալետի հեղինակը		Գետ Սիբիրում	⇩	⇩			Պատմական մարզ Հնդկաստանում	⇩		
		⇩		⇩					⇩			
			Ծաղիկ									
Պալատական պաշտոնյա		⇩										Ահաբեկիչ Ուսամա Բեն ...
⇩						Հերոս՝ «Տրակտորիստները» ... Յարկո				Գրող՝ էդգար ... Պո		⇩
	... ու գրականություն		Բուքի եւ ճկույթի միջեւ հեռավորություն	Մարզիկների խումբ	⇩	Կղզի Վանա լճում	Դերասանուհի՝ ... Ախեջակովա	⇩				
	⇩		⇩	⇩		⇩	⇩					

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñÑñ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦ êäÀ

îÝûñ»Ý՝
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý
¶ËË³íáñ ËÙµ³·Çñ՝
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É՝
²í³· º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ñ³íáñáÕ՝
Ð³ëÙÇÏ ²µ»ÉÙ³Ý

ºñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am
info@mes.am

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ՝ ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ՝ 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõË
ä³ïí»ñ՝ 435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ù³Ï³Ý՝ 1074,
ïå³ù³Ý³ÏÁ՝ 5262 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
7.3.2013 թ.